ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«03» «հունիսի» 2025 թվական № 218-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 343-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշմամբ, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 13-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության հաստիքացուցակը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունիսի 9-ի N 173-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 343-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանով հաստատված հավելվածի 2-րդ՝ «ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ» գլխի 2-րդ՝ «Ֆինանսատնտեսական վարչություն» կետի 2.3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«

2.3 Վարչատնտեսական սպասարկման բաժին			
1	Բաժնի պետ	1	15-33.2-Ղ4-5
2	Գլխավոր մասնագետ	1	15-33.2-Մ2-17
3	Գլխավոր մասնագետ	1	15-33.2-Մ2-18
4	Ավագ մասնագետ	1	15-33.2-Մ4-9
5	Օպերատոր	1	
6	Թարգմանիչ	1	
7	Վարորդ	1	
8	Պահեստապետ	1	
9	Տնտեսվար	1	

Ընդամենը	9	
Ընդամենը վարչություն	33	
Ընդամենը աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ	56	
Ընդամենը կառուցվածքային ստորաբաժանումներ	189	

» :

2) հրամանով հաստատված հավելվածի «Քաղաքացիական աշխատանք կատարողներ» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

«

Քաղաքացիական աշխատանք կատարողներ			
1	Իրավախորհրդատու նախարարի	5	
2	Գլխավոր քարտուղարի օգնական	1	
3	Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող	5	
Ընդամենը		11	

»:

Հ"ՍԻՄԻԴՅԱՆ

6/3/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Երևան